ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 սեպտեմբերի 2017 թվականի N 150-Ա

Ա. ԲԱՎԵՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Ա. Բավեյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անդրանիկ Բավեյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ՝ 12 օր:

2. ***Անդրանիկ Բավեյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ *Էլինա Մելքումյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի 19
ք. Հրազդան